

մասին (52—54), Պետրոսի գլխաւորութիւնն ու հռոմէական եկեղեցին (55—56), ճշմարտութեան անփոփոխելիութիւնը (58), եկեղեցու վարդ սկզբնաւորութեան մասին (59—62) և եկեղեցու և գլխութեան յարաբերութիւնը (57 և 63—65):

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Այս տարի Զուիցերիայի մի քանի կանտոններում եկեղեցին պետութիւնից բաժանելու հարցը հրատապ բնաւորութիւն էր ստացել: Առաջին անգամ այս հարցը բարձրացրեց Նոյեմբուրգի կանտոնը, բայց ազգային եկեղեցին յաղթող հանդիսացաւ, մերժելով բաժանման օրինագիծը: Նոյն լնդիրը, թէև յարուցուած էր Վատա կանտոնում, բայց բաժանման սակաւաթիւ կողմնակիցներն ստիպուեցան յետ կենալ իրենց մտադրութիւնից, պարզ նկատելով ժողովրդի տրամադրութիւնը: Ընդհակառակ բաժանման օրինագիծն անցել է ժընեւի կանտոնում, թէև ձայների շատ շնչին առաւելութեամբ: Ժողովրդի համարեա կէսը չի մասնակցել ձայնատուութեան. շատերի համար միանգամայն անակընկալ էր բաժանման օրինագծի ընդունելութիւնը: Ժընեւում այսպիսի փորձեր մի քանի անգամ էին եղել և միշտ եկեղեցու և պետութեան ներկայ հարաբերութեան պահպանութեան կողմնակիցները յաղթող հանդիսացել: Այս անակընկալ յաղթութեան նպատակ էն հետեւեալ հանգամանքները: Վաթուրի եկեղեցին Վուլտուրիամիլի ժամանակից 1873 թուից զրկուած էին պետական օժանդակութիւնից, նորա տեղն էր բռնել այսպէս կոչուած կաթոլիկական ազգային եկեղեցին: Բուն կաթոլիկները, որ հետզհետէ բազմանում էին Ֆրանսիայից և Սալոյայից եկած գաղթականներով, այս բանը մարսել չէին կարող և քաջարձակ կողմնակից էին եկեղեցու և պետութեան բաժանման, որովհետև հարուածն ամբողջապէս բողոքականութեան էր հասնում: Բաժանման ձայնակցել են սոցիալիստները, ինչպէս և արմատականների և դեմոկրատների մի մասը: Բաժանման ձայն են տուել և այսպէս կոչուած անկախ եկեղեցու համայնքի անդամները: Բայց աւելի նպատակ էն կալվինական կամ ժընեւի ազգային եկեղեցու 17 հոգևորականների կողք, որոնք համոզուած են, որ պետութիւնից անկախ և բաժան եկեղեցին աւելի կծաղկի և արդիւնաւոր կլինի ժողովրդի համար: Այսպէս թէ այնպէս ժընեւի կանտոնում եկեղեցու և պետութեան բաժանումը իրողութիւն է. սակայն այստեղ օրէնքը այնպիսի թշնամական ոգւով չէ խմբազրուած, ինչպէս

Տրանսիլայում: Ներկայ հոգևորականները հանգստեան թոշակ պիտի ստանան պետութիւնից իրենց ծառայութեան տարիների համեմատ, եկեղեցիներն իրենց կալուածներով մնում են եկեղեցական համայնքներին, որոնք իրաւաբանական մարմին են ճանաչում և կարող են կազմակերպուել ընկերութիւնների նման: Եկեղեցիները իրաւունք ունին կարողութիւն, կալուած ձեռք բերելու, կտակներ ընդունելու, պայմաններ կսպելու այն կամ այն հաստատութիւնների և անձանց հետ: Օրէնքը պէտք է դորձադրուի 1909 թուից սկսած:

Կատարուած իրողութիւնը ժընեւի պատմական կեանքի մէջ մի մեծ փոփոխութիւն էր: Ժընեւը, ինչպէս յայտնի է, կալվինականութեանն կեդրոնն էր, բողոքականութեան Հռոմը: Ոչ մի տեղ բողոքական եկեղեցին այնպիսի սերտ կապեր չի ունեցել պետութեան հետ և այնպիսի դեր կատարել պետութեան կազմակերպութեան մէջ, ինչպէս այստեղ: Ժընեւի պետութիւնը իւր կազմակերպութիւնն ստացել էր կալվինականութեան ազդեցութեամբ. եկեղեցին պետութեան չէր ենթարկուած, այլ պետական և եկեղեցական սկզբունքները կարելի էր ասել, թափանցել էին միմեանց մէջ. Ժընեւը մի տեսակ ստուածպետական կազմակերպութիւն էր: Ժընեւը եւրոպական ազգերի մէջ դեր է կատարել, հոգևոր կեդրոն հանդիսացել այս ուրոյն յարաբերութեան պատճառով: Մինչև վերջին ժամանակներս Ժընեւի եկեղեցին վարչական մարմին, կեդրոն չի ունեցել, այնքան սերտ է եղել նորա կապը պետութեան հետ. միակ վարչութիւնը Vénérable compagnie des Pasteurs-ն էր, որ քաղաքական խնդիրներն մէջ ևս այնպիսի իրաւունք ունէր, ինչպէս ոչ մէկը բողոքական եկեղեցիներից: Այս բաժանման նախապատրաստութիւնը կատարուեցաւ հետզհետէ, երբ պետութիւնը իրացրեց եկեղեցու քաղաքակրթական պարտաւորութիւնները:

Որքան և ցանկալի չէր եկեղեցու իսկական բարեկամների համար պատմական անցեալի այս յեղաշրջութիւնը, բայց նրանք գլուխները չեն կորցրել նոր պայմանների առաջ: Եկեղեցական վարչութիւնները՝ հանոխատրիան, Compagnie des Pasteurs-ը, կուսակցութիւններն ու ուղղութիւնները միաձայն որոշել են համերաշխութեամբ պահպանել Ժընեւի ազգային կամ Կալվինական եկեղեցու ներկայ կազմակերպութիւնը: Կազմուած է մի յանձնաժողով, որ պէտք է մի ծրագիր մշակէ նոր պայմանների մէջ եկեղեցու ամբողջութիւնը պահպանելու. յանձնաժողովի ծրագիրը քննութեան կենթարկուի և վերջնականապէս կհաստատուի ներկայ աշնանը դումարուելիք ժողովում: